Ե. ՏԱՐԻ ԹԻՒ 1450 • 5 MART 1936

ԳԻՆ 4 ՂՐՈՒՇ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 ՄԱՐՏ 1936

AREVELK

Siyasi, İktisadi ve edebi yevmi gazete
Galata, Tunel itisalinde, Billur Sokak
No. 10

ԻՆՉՊԷՍ ԿԱՐԴՈՒԱԾ ԵՒ ԳՐԱՆՑՎԱԾ

	ՀԵՏԱՍԱՆԱՑ	ՏԱՐԵԿԱՆ
ՅՈՒՐՔԻՆ	700 ՂՐՇ.	1400 ՂՐՇ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	110 ՖՐ.	200 ՖՐ.
ԱՄԵՐԻԿԱ	9 ՏՈԼԱՐ	15 ՏՈԼԱՐ

AREVELK
ԱՐԵՒԵԼՔ

Ե ՀԱՄԱՐԵՑԵՑՆ 40852 ◆ ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ ◆ Telefon 40852

Գիւղուր փողոց թիւ 10
Ղալաթիա, Թիւնէլի կից

AREVELK
Quotidien Arménien Politique
Economique et Littéraire
Galata, B. P. 1203
ԽՄԲԱԳՐՈՂ
ԽՈՐԷՆ ՀԱՄԱՀԵԱՆ

Ծ. ԱՐԵՒԵԼՔԻ ՏԱԳՆԱՊԸ

ՃԱԲՈՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԻՊԵՐԻՈՅ

Թոքիոյի մէջ ծագած զինուորական յեղափոխութիւնը այժմէնութիւն կուտայ Ծ. Արեւելքի հարցին, որ ապագայի ըլլալ չէր գաղրած արդէն, մ՛այն օրէն երբ Ճաբոն Մանչուրիան գրաւելով, սպառնաց կան դիրք բռնել Ռուսիոյ հանդէպ։ Արդարեւ, Մանչուրիոյ գրաւումը առաջին քայլն էր Ասիոյ ամբողջական ճաբոնական քաղաքականութեան և ամէն մարդ կը հարցնէր թէ Մանչուրիայէն վերջ Ասիական ո՞ր երկրին կարդը պիտի գար՝ մանելու Միքատոյին կայսրութեան չրջանակին մէջ։ Ճաբոն Մանչուրիոյ մէջ հաստատուելէն վերջ այնպիսի պատրաստութիւններ տեսնել սկսաւ որ, գուշակել կուտար թէ ապագայ բախումը տեղի պիտի ունենայ Ռուսիոյ հետ։ Առաջին տարին իսկ ան Փափաքեցաւ իւրացնել Արեւել. Զինաստանի երկաթուղի կոչուած գիծը որ Մանչուրիոյ մէջէն կ՛անցնի ու Ռուսիոյ սեփականութիւնն է, և ուղղակի և ամէնէն կարճ ճամբով կը միացնէ Մանչուրիոյ արեւմտեան սահմանին կից Սիպերիական նահանգը Վլատիվոսթոքի հետ։ Ճաբոն բաւական չի՝ Սիպերիական նահանգը իր գրաւած երկրին մէջ ի բաց հսկցուց թէ չի կրնար հանդուրժել իր գրաւած երկրին արեւելեան ծայրէն Մոնկոլիոյ դրաւման փորձեր կատարելու մէջ։ Արդէն Զինաստանի հարաւային Մոնկոլիան իր ազդեցութեան չրջանակին մէջ մտած է։ Կը մնայ Ռուսիոյ սահմանակից և Սովէթ ազդեցութեան ենթակայ հիւսիսային Մոնկոլիան ալ գրաւել, ասկէ ուղղակի Ռուսիան հոգ մանելով գայքալ լիճը գրաւելու համար, որպէս զի այս կերպով Արեւել. Սիպերիան անկասկած ապահովի։

Արդէն հիւսիսային Մոնկոլիոյ արշաւանքը սկսելու վրայ էր երբ ծագեցաւ Թոքիոյ ապստամբութիւնը։ Ապստամբները ճաբոն հանրային կարծիքը և ճաբոնի ազգային իրէալը և աւանդութիւնը կը ներկայացնեն։ Ճաբոն ազգին մէջ արմատացած դարաւոր աւանդութիւնը սա է. «Ճաբոն ազգը Սիպերիայ՝ն գաղթած է՝ ներկայ կղզիները, թէ Սիպերիան իր ծննդավայրն է և իրեն հօրենական ժառանգը։ Ուշ կամ կանուխ, պէտք է զայն գրաւել և վտարել անոր օտարոտի տէրը որ չէ ուզեր իր ծննդավայրն ազատագրելու ժամը։ Կառավարութիւնը միշտ համարձակ չէին կրցած կառավարութեան խօսք հասկցնել՝ թէ հնչած է ժամը չէին կրցած ծննդավայրը ազատագրելու։ Ամէն ոք պատասխանէին. «Ազգային բերութիւն կը քարոզէր, բայց անոնք կը պատասխանէին. «Ազգային դիրքերու, ինչպէս զորեղ, զուգ տարուած էք դրամաշնորհ չէ որ ձեզ կը մղէ այդպէս գործելու, զուգ տարուած էք դրամաշնորհ չէ որ ձեզ կը մղէ այդպէս գործելու, ձեր գաստիարդին կոչմէ օրուն երազն է նոր հրապարակներ փնտռել, ձեր գաստիարդին կոչմէ օրուն երազն է նոր հրապարակներ փնտռել, հոն ուզարկել իր ճարտարարուեստական արտադրութիւնները և դրամ դիզել, և որովհետեւ պատերազմը պիտի խանգարէ ձեր այդ գործունէութիւնը և ձեր հաշիւները, դուք կը խուսափիք պատերազմէ և կ՛ընդդիմանաք ազգային իրէալին իրագործումին։ Ուրեմն, հեռացէ՛ք։» Ամէն 5-6 տարիէ ի վեր միշտ կը հեռացնեն անոնց զեկավարները, պարեւ 5-6 տարիէ ի վեր միշտ կը հեռացնեն անոնց զեկավարները, պարբերաբար ապանելով անոնց նախարարները։ Այս անգամ աւելի լայն չափով ապանելով անոնց նախարարները։ Ճարժումը թէեւ դեռեւի վրայ գործադրեցին իրենց սպառնալիքները։ Ճարժումը թէեւ դեռեւի վրայ գործադրեցին իրենց սպառնալիքները։ Ամբոխը զարթնած է, բայց կատարած է իր գործը։ Նոր գահլիճը անոնց ազդեցութեան տակ պիտի ըլլայ և պիտի տարուի անոնց գահացում տալ։ Բայց Զարթնած է, բայց կատարած է իր գործը։ Նոր գահլիճը անոնց ազդեցութեան տակ պիտի ըլլայ և պիտի տարուի անոնց գահացում տալ։ Բայց թէեւ տակ պիտի ըլլայ և պիտի տարուի անոնց գահացում տալ։ Բայց ե՞րբ։ Ահա այս խնդիրն է որ կը մտահոգէ ամբողջ աշխարհը։ Դէպքերը ե՞րբ։ Ահա այս խնդիրն է որ կը մտահոգէ ամբողջ աշխարհը։ Դէպքերը ցոյց կուտան թէ այլեւս պատերազմը անխուսափելի է Ճաբոնի և Ռուսիոյ միջեւ։ Բայց ե՞րբ պիտի պայթի։

Միւս կողմէ, Ռուսիա ի՞նչ կը մտածէ, պատրաստ է զիմագրաւելու Ճաբոն յարձակումին։ Նշաններ կան թէ 4 տարիէ ի վեր Ռուսիա ծագեցաւ Թոքիոյ ապստամբութիւնը։ Ապստամբները Ճաբոն հանրային կարծիքը և Ճաբոնի ազգային իրէալը և աւանդութիւնը կը ներկայացնեն։ Ճաբոն ազգին մէջ արմատացած դարաւոր աւանդութիւնը սա է. «Ճաբոն ազգը Սիպերիայ՝ն գաղթած է՝ ներկայ կղզիները, թէ Սիպերիան իր ծննդավայրն է և իրեն հօրենական ժառանգը։ Ուշ կամ կանուխ, պէտք է զայն գրաւել և վտարել անոր օտարոտի տէրը որ չէ կրցած զայն չենչնելու։ Ահա այս գաղափարով ազդուած ապստամբները։ Ամէն ոք չէին կրցած կառավարութեան խօսք հասկցնել՝ թէ հնչած է ժամը չէին կրցած կառավարութիւնը միշտ համարձակ չէին կրցած կառավարութեան խօսք հասկցնել՝ թէ հնչած է ժամը։

ՄՈՒՍՕԼԻՆԻԷՆ ՅԵՏՈՅ Ի՞ՆՉ

(Շար. երկի թիւեն եւ վերջ)

Իտալիոյ հանրապետականները համայնքին հակակշիռին պիտի են. Թարկեն ճարտարարուեստական այն խոշոր ձեռնարկները, որոնք չեն կրնար ապրիլ առանց պաշտպանողական մաքսի և պետական օժանդակութեան. [հողին վրայ աշխատողներուն պիտի վերադարձնեն այն տասնբեռթը միլիոն արտավար հողը որ այսօր կը վերաբերի 12 հազարէն ոչ աւելի մակաբոյծ խոշոր հողատէրերու. չեղեալ պիտի համարեն Լաթերանի համաձայնութիւնները. պետութեան անջատումը եկեղեցիէն իրակա՛ն պիտի դարձնեն և հաւասար ու անկախ ազատութիւն պիտի տան բոլոր հաւատալիքներուն. մեծապէս պիտի պակսեցնեն զինուորական ծախքերը և ժողովրդական կրթութեան ծրագիր մը պիտի գործադրեն հնարաւոր ամենամեծ արագութեամբ:

Եթէ ո և է մարդ ուզէ, ազատ է այս խոշոր տարողութեամբ փոփոխութիւնը որակել իբրեւ «ընկերային յեղափոխութիւն», պայմանաւ որ ընդունի թէ «համայնավար յեղափոխութիւն» մը չէ, այլ ճիշդ անոր հակառակը, քանի որ Իտալիոյ մէջ պիտի ստեղծէ առնուազն երկու միլիոն մանր հողատէրեր:

Ճարտարարուեստական խոշոր ընկերութիւնները արդէն իսկ վերջ ի վերջոյ պիտի սնանկանան երբ զրկուին այն օժանդակութենէն, որ հարկատուներու գրպանէն ելած գրամով իրենց կը տրուի կառավարութեան կողմէ. իսկ մեծ հողատէրերը իբրեւ եկամուտ քիչ կամ ոչինչ կը ստանան իրենց հողերէն, իբրեւ հաւեւանք ֆաշիստական տասերեք տարիներու վատնումներուն և չայլութեան և ինը տարիներու տնտեսական տագնապին և անտանելի տուրքերուն:

Այդ պարոնները զրկել իրենց ճարտարարուեստական ձեռնարկներէն և իրենց հողերէն, պիտի նշանակէ զիրենք զրկել ստացուածքէ մը, որ չի կրնար պահուիլ առանց կառավարական օժանդակութեան և կամ քամուած է իր անտեսական բոլոր արժէքներէն:

Իտալական այդ տեսակ ոմանվար հանրապետութիւն մը Իտալիան զարձնել պիտի բերէ քաղաքակիրթ աշխարհի շրջանակին մէջ:

Ազատութեան այդ մթնոլորտին մէջ, փորձի շրջանով մը, որուն մէջ Իտալիա սխալներ պիտի գործէ անշուշտ, ինչպէս բոլոր ժողովուրդները գործած են, պիտի վերակսի իր բարեշրջումին, որ բաւական առաջացած էր, երբ ամէն ինչ տակնուվրայ չէր եղած ֆաշականութեան ձեռքով:

Ասոնցմէ զուրս անգուշակելի լուծումներ կրնան տեղի ունենալ հաւաձայն Մուսօլինիի անկումի եղանակին և այդ պահուն տիրող հանգամանքներուն: Ամէն պարագայի տակ մէկ բան սայթ է.— Մուսօլինի յաւիտենական չէ՛: Ուշ թէ կանուխ Իտալացիները պիտի դիմադրաւեն այս հարցը.— «Յետոյ ի՞նչ»:

Ո՛չ Իտալիոյ, ոչ ալ մարդկութեան համար չարիք մը կ'ըլլայ եթէ այդ հարցը դիմաւորուի այսօր, քան թէ տասը քսան տարի ետք:

Տասերեք տարի Եւրոպայի և Ամերիկայի պահպանողականները դիւանագիտական, բարոյական և ելմտական ամէն օժանդակութիւն ընձեռեցին, որոնց պէտք ունէր Մուսօլինի Իտալացի ժողովուրդը խեղդելու համար: Բրիտանական կառավարութիւնը չէ՞ր Մուսօլինիի ամենալաւ բարեկամը 1924—1934: Ի՞նչ էր Մ. Լավալի ըրածը 1935ին եթէ ոչ ընդօրինակել Մուսօլինիի հետ սերտ բարեկամութեան քաղաքականութիւնը, որ Սրբ Օսթէն Զէմպրլէն որդեգրած էր Մաթէոթիի սպանութենէն անմիջապէս ետք և որ ձեռքէ ձեռք փոխանցուած էր Արթըր Հէնդերսընի, Սրբ Ջոն Սայմընի և Սրբ Սամուէլ Հոբի:

Բրիտանական ժողովուրդը անշուշտ պատասխանատու չէր այդ քաղաքականութեան և անմիջապէս որ ըմբռնեց թէ ինչ կը նշանակէր ատիկա, վտարեց Սրբ Սամուէլ Հոբը: Բայց դեռ այն պահուն ուր իտալացի ժողովուրդը զա՛ն է ոտքերդութեան մը, որուն համար այնքան պատասխանատու են բրիտանական և ֆրանսական գիւանագէտներն ու ամերիկեան դրամատէրները որքան նոյն ինքն Մուսօլինին, կը հանդիպինք մարդոց որ կը հարցնեն.— «Մուսօլինի, բայց յետոյ ի՞նչ», և անմիջապէս կ'աւելցնեն թէ «Իտալիա առանց անոր չի կրնար ըլլալ»:

Մենք միշտ ալ իտալական ժողովուրդի իրական բարօրութեան և աշխարհի խաղաղութեան համար վանդ մը նկատած ենք ֆաշիստ տիրակալութիւնը: Հիմա որ իտալացի ժողովուրդը սոսկալի փորձութեան մը մատնուած է և Մուսօլինիի ոճիրներուն մեղսակիցները կը հարցնեն թէ «Յետոյ ի՞նչ», մենք կը պատասխանենք.— «Իտալիա՛ն»: Մենք հաւատք ունինք իտալացի ժողովուրդին կենսունակութեան, բարոյական առողջութեան և քանաւորութեան մասին: Մուսօլինիէն առաջ Իտալիա մը գոյութիւն ունէր: Մուսօլինիէն ետք գոյութիւն պիտի ունենայ Իտալիա մը — ազատ Իտալիա մը՝ ազատ ազգերու հոյլին մէջ: Ապ.

ՀԱՐՍՏՈՒԹԵՆԷՆ ԿՇՏԱՑԱԾ

ԴԵՌ 19 ՏԱՐԵԿԱՆԻՆ

Եէհուսի Մէնահիմ, աշխարհատանօթ պատանի ջութակահարը, յզնած բլլալով չորս տարիներէ ի վեր տուած նուագահանդէսներէն, որոշած է քաշուիլ ասպարէզէն:

Մէնահիմ, որ հազիւ 19 տարեկան է այսօր, շատ կանուխէն ցոյց տուած էր հաղուագիտ տաղանդ մը նուագելու արուեստին մէջ:

Զորս տարիներու ընթացքին, ան յաջողեցաւ մեծ համբաւ մը շինել և դիզել կարեւոր հարստութիւն մը: Այս տարի 250 հազար օթերլին պիտի շահէր իր կնքած զանազան պայմանագրութեանց շնորհիւ, բայց ընած է զանոնք և քաշուած է Բանատայի մէջ գնած իր մէկ ապարանքը:

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԶԵՌԱՐՈՒԵՍՏԸ

Բ.

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԶԱՐԴԱՐԷԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԾԷՆՔԵՐԸ

Բիզանդական կառուցածքները կը ցուցնեն թէ եկեղեցիներու ներքին պատերը զարդարուած են մարմարիոնէ, յախճապակիէ, որոնց վրայ ձեռագործուած են Յիսուսը, Առաքեալները, Յովսէփն ու Մարիամը: Նկարներուն խորքը կապոյտ կամ ոսկեգոյն են: Առատաձեղէն այս պատկերները մեծաշուք և անբացատրելիօրէն բնական տեսքով կը փայլին դիտողներու աչքին: Թանկարժէք մետաղներ գործածուած են բարձրացնելու համար յաւիտենական յարգանքն ու համակրանքը: Ոսկեզօծած են սիւներու գլուխները, [ձեղունը:

Ըստ հոյակապ իմաստասէր Էօզէպի (եպիսկոպոս Կեսարիոյ և հոգինակ եկեղեցական պատմութեան 267—340), Անտիոքի մեծ եկեղեցին բոլորովին լուսամաճանչ պայծառութեան մէջ կը շողար ոսկիէ և թանկարժէք քարերու, նիւթերու աչք շլացնող երփներանգ փայլունութեամբ: Դեռինը փղոսկուած էին մեծարժէք թաւշանման գորգեր:

Եկեղեցիներու դուրսի մասերն ալ գեղեցիկ յիշատակարաններ են նրբաճաշակ զարդարանքներով: Իսկ ճակատները միշտ արքայական են:

Քրիստոնէական խորհուրդը այնքան ազդած է կայսր Կոստանդինի և հաւատացեալներուն, որոնք իրենց նիւթական գանձերը, մաքի ստեղծագործութեան էն թանկագինները յատկացուցած են եկեղեցիի պայծառաւ եան: Սա պատճառ եղած է արուեստի, գեղարուեստի վերածնունդին Արեւելքի մէջ և երկարած մինչեւ Արեւմուտք իր կախարդիչ ոճով ու ճաշակով: Նկարչագեղ եկեղեցիները իրենց մէջ ունին և ծաղիկներ գոյնզգոյն: Դարձեալ Դ. և Ե. դարուն եկեղեցիներէ զատ այլ չենքեր բարձրացան բիւզանդական ոճով, զարդարուած պատուղներով, որթատունկի կենսաբաշխ ողկոյզներով: Թէեւ ատոնք հեթանոսներէ փոխ առնուած ճաշակներ են, բայց ինքնատիպ իրենց ազուորութեամբ:

Նաեւ ծաղկեպսակներ՝ իրենց տերեւներով կանաչագոյն, ծաղիկներ ամէն գոյնէ-գոյն քովի, իրարու կապուած բնական տեսքով: Թաշուններու երամներ, կենդանիներ, մարմարի վրայ՝ մարմարէ, յախճապակիէ, մարդու մատներուն աշխատանքով նիւթին վրայ կենդանութիւն տուած բնական հրաշալիքներ:

Դարձեալ Էօզէպ գիտունին տանք խօսքը.— Կոնստանդինի օրով բարձրացած չէնքերու պատերուն վրայ կը նշ արուէին զազաններ որոնք գետեղերքը ձկնորսութեամբ կը զուարճանան, սագեր, բադեր գետին մէջ կը լողան, բնական գոյներով գծագրուած: Ինչպէս նաեւ վաճառորդներ իրենց ապրանքներով կը ներկայանան:

Արդ, այս քարերն ու մարմարները ապագայ հետախոյզին ինչե՞ր չխօսեցան: Մթէ՞ ընդհանուր պատմութեան աղբիւրներուն շատերը՝ յիշատակարաններու համար լեզուներով չե՞ն որ մեզի հաստատեցին նախնեաց ապրումները, կենցաղը, ճաշակը և զործքը:

Սելանիկի Ս. Գէորգ գմբէթաւոր եկեղեցին, կառուցուած Դ. դարուն, իր մէջ ունի երկու հատ մկրտութեան աւազաններ թանկագին ակուներով զարդարուած, կիսալու ին ձեւով խոզուած յախճապակիէ:

Նաև Մայր Աստուածածին եկեղեցիին կամարները զարդարուած են գունաւոր գեղեցիկ ու փայլուն քարերով: Սա նման է Պէթլէհէմի արքունի եկեղեցիին դասլիճին:

Վերոյիշեալ պատկերները Դ. դարուն կը նշմարուէին նաեւ կերպասներու վրայ պատուներ, կենդանիներ, թռչուններ եւն.:

Եկեղեցականներ ինչո՞ւ այսքան հոգ տարած են եկեղեցիներու յարդարման:

Ինչպէս խօսքը ականջին միջոցով, նոյնպէս և նկարը իր համբութեամբ կը տպաւորէ դիտողը, կ'ըսէ Ս. Բարսեղ:

Ըստ հնախոյզ Շարլ Տիլի, նրկարը իր գոյներով, գիրքի մը խօսուն սզդեցութիւնը կը թողու մեր վրայ:

Հետեւաբար Դ. դարու խելացի կղերականութիւնը արթուն գտնուած է հին և նոր կառակարռներու դէմքերն ու կեանքը նկարելով պատերուն վրայ. այս հրապուրիչ ոճով տեսակ մը դպրոց հիմնուած է դատարակելու և զարգացնելու համար ժողովուրդը, մանաւանդ անոր մէջ համակրանք ու սէր արթնցնելով դէպի Քրիստոնէութիւնը:

Կոստանդինի օրով եթէ քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք ընդունուեցաւ բիւզանդական կայսրութեան մէջ, նոյնպէս և հելլէնական արուեստը պաշտօնական դարձաւ ժողովուրդին մէջ:

Շարլ Տիլ կ'ըսէ.— ամբողջ Դ. դարուն հելլէնական արուեստը, ճարտարագիտութիւնը ծաղկեցաւ, ուռճացաւ և տարածուեցաւ հելլէնական մեծ քաղաքներու մէջ, ինչպէս՝ Անտիոք, Սուրիա, Եգիպտոս:

Արուեստի հոյակապ ստեղծագործութիւնը Դ. դարուն «քառաքէոիսգիք» կերպով ցուցադրեց Մարիամ Աստուածածինը՝ իր հզօրութեան ու անմեղութեան մէջ, Յիսուսը՝ իր անսահման մաքի ոյժին և ապրումներուն մէջ, աշակերտները՝ բնական, և այս բոլորը բիւզանդական տարազով:

Տ. ԼԻՒԼԷՃԵԱՆ

ԳԵՐՄԱՆ ծանօթ բեմագրիչ Քարլ Էպերթ որ պետական թատրոնը կազմակերպելու համար հրաւիրուած էր, նախորդ օր Ա. գարայէն Իսթանպուլ եկաւ, հոս եւ շփումներ ունենալու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

ՍՕՖԻԱՅԻ ՌԱՏԻՈՅԷՆ

Ֆիլիպէի «Վ. Մանուէլեան—Գեղարուեստասիրաց» միութեան 70 հոգինոց երկսեռ երգչախումբը, ղեկավարութեամբ Պ. Կ. Կարապետեանի մեծ համերգ մը կուտայ Սոֆիայի ռատիոյէն (կարճ ալիք 20.05), 15 Մարտ, կիրակի առաւօտ ժամը 11ին:

Յայտագիրը որ կը բաղկանայ երկու մասերէ, կը պարունակէ հետեւեալ կտորները.—

Ա. ՄԱՍ.—

Ո՛վ Մեծասքանչ (Կոմիտաս), Տաղ Նահատակաց (Յ. Աղասեան), Գարնանային (Մենաեւսօն), Ինչո՞ւ Բինկէօլը մառ, Սուսամ սիւմբիւլ, Երեւան բաղ եմ արել, Արեւ, կայնէ կէսօր (Կոմիտաս), Գիլիբի (Սպ. Մելիքեան), Ջիգ տու քաչիր (Կոմիտաս), Սլանա Բանա (Տ. Խրիսթոֆ):

Բ. ՄԱՍ.—

Ծամթել (Շամիրամի առասպելից) (Սպ. Մելիքեան). Երկէն Տէս (Տ. Խրիսթոֆ), Սէն սընուվան (Բ. Սթայնոֆ) Սարերի վրով—Երի երի ջան (Կոմիտաս), Տէպրէ Տիմ (Բ. Սթայնոֆ):

Պիտի մեներգեն Գ. Մ. Փափազեան, Օրներ Վ. Երկանեան, Ս. Պզպէեան:

*** Նոյն օրը, երեկոյեան ժամը 20—22, Թուրքիոյ համար երգահանդէս մը պիտի տուի Մոսկուայի ռատիոյէն:

ՆՈՐ ՍՓԻՆՔՍԸ

Արեւելեան Ափրիկէի յարմար մէկ վայրին վրայ կանգնուած է հսկայ արձան մը, Իտալիոյ վարչապետ և միահեծան իշխանաւոր Մուսօլինիի գլուխը, զրնոր Սփինքս կը կոչեն Հռոմի մէջ:

Մուսօլինիին ալ անհաճոյ չէ այս անուանակոչումը, կ'ըսէ այս լուրը տուող թերթը և կ'աւելցնէ.—Երբ երկու սիկիլիացի զինուորներ որ ամիսներէ ի վեր Ափրիկէի արեւուն տակ տոչորուելն նեղուած՝ իրարու հետ կը վիճէին, յանկարծ անոնցմէ մին դիտելով նոր Սփինքսի ձգած խոշոր շուքը, կը գտանայ Տուչէին գլուխին կողմը և կ'ըսէ.—Միայն այս է որ կրնայ մեզի ճիշդ պատասխանը տալ:

Դժբախտաբար մենք Իդիպոս չենք, կը պատասխանէ միւսը:

Իդիպոս կամ «Էֆիպ» յունական դիցաբանութեան մէջ յիշուած թագաւոր մըն է, զաւակը Թէփէի թագաւոր Լայիուսի և թագուհի Յոքաստէի: Սփինքսը Եգիպտացիներուն համար արեւը խորհրդանշող կենդանի ՝մըն է, մարդու գլուխով և առիւծի մարմինով: Յունական դիցաբանութեան համաձայն՝ այդ խորհրդաւոր կենդանին կայնած Թէփէի ճամբուն վրայ, հանելուկ հարցնելով կ'ուղղէր անցորդներուն, որոնք եթէ էկարենային լուծել, կը սպաննուէին Սփինքսէն: Լայիուսի յաջորդը՝ Գրէոս թագաւորը՝ Յունասանը Սփինքսին ձեռքէն ազատելու խոստացաւ արքայական գահն ու թագուհին:

Իդիպոս՝ երբ օր մը անցաւ պատահմամբ, իր ոքսորի ճամբուն վրայ, Թէփէի մօտերէն հանդիպեցաւ Սփինքսին, որ իրեն ալ ըստ նոյն հարցումը որ կ'ուղղէր միւս ուրիշներուն: Հարցումը սա էր.— «Ո՞րն էր այն կենդանին, որ առաւօտուն կը քալէ չորս ոտքով, կէսօրին՝ երկու և երեկոյեան՝ երեք ոտքով»:

Իդիպոս լուծեց այդ հանելուկը, ըսելով թէ մարդն է, որ առաւօտն է մանկութիւնը, կէսօրը՝ երիտասարդութիւնը, [իրենը՝ ծերութիւնը, ուր անկումը կը սպասնայ (երեք ոտքով քալելով):

Հրէշը՝ բարկացած Իդիպոսի ուշիմութենէն, դնաց խորասուզուեցաւ ծովուն մէջ. իսկ Իդիպոս եղաւ Թագաւոր և անգիտակցաբար իր մօրը ամուսինը:

ԿԱԹՈՂ. ՆՈՒԻՐԱԿԸ

ԻՐԱԳԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄՕՏ

Գաղտաբէն կը գրեն «Ապագայի».—

Տեղւոյս Ս. Առաքնորդի ուղեկցութեամբ Կաթող. Նուիրակը այցելութիւն տուեց Իրաքի երիտասարդ թագաւորին, փոխանցելով նրան Վեհափառ Հայրապետին բարեմաղթանքները և իր օրհնութիւնները, ազօթելով որ Տէրը օրհնէ Իրաքի երիտասարդ թագաւորը և Իրաքի պետութիւնն ու երկիրը որ այնքան բարեացակամօրէն նայում են Իրաքում ապրող Հայութեան վրայ, յայտնում ժողովուրդի երախտագիտութիւնն ու սէրը և ամենանուիրեալ հաւատարմութիւնը դէպի երկրի պետութիւնն ու նրա վեհապետը:

Երիտասարդ թագաւորը ցոյց է տուել ամենասիրալիր ընդունելութիւն, հրաւիրելով երկու արքունիներին նստելու իր աջ և ձախ կողքին և լսել Վեհափառ Կաթողիկոսի և Ս. Նուիրակի բարեմաղթութիւնները, և Իրաքի հայութեան երախտագիտական զգացումներն ու հաւատարմութիւնը դէպի Իրաքի կառավարութիւնն ու նրա պետը:

ՃԱՓՈՆԻ "ՍԵՒ ՎԻՇԱՊ"Ը

ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճաբոնի մէջ տեղի ունեցած պետական հարուածի փորձը՝ որ ձախողեցաւ, կը գրաւէ հանրային ուշադրութիւնը, բայց կ'ըսեն թէ Թօքիոյի մէջ անոր արուած նշանակութիւնը նոյնը չէ, ինչ որ կրնար տրուիլ Եւրոպայի ո և է մէկ մայրաքաղաքին մէջ:

Ճաբոնցիները վարժուած են 50 տարիէ ի վեր այդպիսի քաղաքական սպանութիւններու, որոնց կազմակերպիչն է «Սեւ Վիշապ» անունով գաղտնի կազմակերպութիւն մը:

Այդ կազմակերպութեան անդամներն են որ 1932ին սպաննին վարչապետ Ինաքոյին. [illegible] ամենայն ելմտական նախարար Թաքահաշիին, որ սպաննուեցաւ վերջին պետական հարուածին ընթացքին:

Հետաքրքիրը այն է որ, «Սեւ Վիշապ» կազմակերպութիւնը՝ թէ միայն տեսչի չէ Ճաբոնցիներուն, այլ անոր պետը, ծերունի Թոյամա, կը վայելէ մեծ յարգանք իր տարիքը անձնաւորութիւնն ու 1923ի մեծ երկրաշարժի ընթացքին նոյնիսկ այդ կազմակերպութեան չպատկանող հարիւրի մօտ անձերի իրենց կեանքը վտանգելով՝ ապահով ըլլալու համար թէ թոյամայի ողջ առողջ է:

ցաւ Սփինքսին, որ իրեն ալ ըստ նոյն հարցումը որ կ'ուղղէր միւս ուրիշներուն: Հարցումը սա էր.— «Ո՞րն էր այն կենդանին, որ առաւօտուն կը քալէ չորս ոտքով, կէսօրին՝ երկու և երեկոյեան՝ երեք ոտքով»:

Իդիպոս լուծեց այդ հանելուկը, ըսելով թէ մարդն է, որ առաւօտն է մանկութիւնը, կէսօրը՝ երիտասարդութիւնը, [իրենը՝ ծերութիւնը, ուր անկումը կը սպասնայ (երեք ոտքով քալելով):

Հրէշը՝ բարկացած Իդիպոսի ուշիմութենէն, դնաց խորասուզուեցաւ ծովուն մէջ. իսկ Իդիպոս եղաւ Թագաւոր և անգիտակցաբար իր մօրը ամուսինը:

"ԱՐԵՒԵԼՔ„Ի ՊԱՏՄՈՒԱԾՔ

ԻՐԵ՞ՐՆ ԱԼ ՀՈԳԻ ՈՒՆԻՆ

ՓԼՈՅ ԿԷՎԷԼ

Սակայն Լօրան տարեդարձին գիշերը, երկու կարեւոր դէպքեր պատահեցան: Իրենց առաջին հանդիպումին ի յիշատակ Գ. Տիլլօրիէ երիտասարդուհիին ձօնեց հովանոց մը սաթէ կոթով, վրան ոսկի օձակով և որուն վրայ փորագրուած էին երկու սկզբնատառ և թուական մը: Եւ, Օ. Քօլոմպիէ, որ վիպային աղջիկ մըն էր, բոլորովին ենթարկուեցաւ Գ. Տիլլօրիէի, բան մը՝ զոր մերժած էր մինչեւ այն առեն: Եւ արկղակալին նուէրը, որ խորհրդանիշն էր իրենց առաջին հանդիպումին ու բարեկամութեան, խորհրդանիշը եղաւ. նաև անոր առաջին նուիրումին:

Լօրա, իր պաշտումի առարկան, իր կուռքը, իր հմայիկը գարձուցեր զայն, անկէ չբաժնուեցաւ երբեք, շնորհիւ հովանոցին կապտորակ գոյնին, անձրեւոտ թէ արեւոտ օրերուն կը գործածէր հաւատարակէս, այնպէս որ ոչ մէկ առեն և ոչ մէկ եղանակի ձեռքէ չձգեց զայն: Գ. Տիլլօրիէ կը ծիծաղէր իրենց սիրոյն այս յաւիտենական ընկերոջը վրայ, որովհետեւ խորհրդանիշ մը ըլլալը պատճառ մը չէր որ այդ առարկան չկարենար կորսուիլ, ինչպէս սովորական հովանոց մը: Թիստ շատ անգամներ Գ. Տիլլօրիէ կը տարուէր նախորդ օր իրենց գտնուած վայրը դառնալ, մոռցուած հովանոցը փնտռելու համար, և կամ հոն՝ ուր մոռցուած առարկաները կը հաւաքուին: Թէեւ այս մոռացումի պատասխանատուութեան կէսն ալ իրը կ'ըլլար, որովհետեւ բաժանումի պահուն, երկուքն ալ անձկութեան մէջ կ'ըլլային, և երկուքն ալ չէին կրնար մտածել իրենց միութիւնը ապահովող սիրոյ գրաւականին մասին:

«Վատահ եմ որ այն օրը որ կորսնցնեմ զայն, ճակատագրական պիտի ըլլայ մեր սիրոյն համար», կ'ըսէր յաճախ Օր. Քօլոմպիէ:

Ասիկա Գ. Տիլլօրիէի համար ազայութիւն և նախապաշարում մըն էր, որուն վրայ կը ծիծաղէր. սակայն ինչո՞վ կրնար պայքարիլ այս կարգի մտածումի մը դէմ:

Իր լաւատեսութիւնը երկար չտեւեց սակայն, յաջորդ տարին, Լօրա իր հովանոցը նամակատան սեղանին վրայ մոռցած ըլլալով, կարելի չեղաւ զայն գտնել, հակառակ բոլոր ձեռք առնուած միջոցներուն:

Անկէ յետոյ Լօրա բոլորովին փոխուեցաւ, անհանգիստ ու անարամադիր վիճակ մը ստացաւ:

Ցարօրինակ զուգադիպութիւն, հովանոցին կորուստին հետ Լօրա նոր օրիորկածի մը մէջ ինկաւ: Գ. Տիլլօրիէ այս մրցակցին գոյութիւնը միայն այն առեն իմացաւ երբ Լօրա իրեն տեղեկացուց թէ կը նշանուի: Այս պայմաններուն տակ իսկ, Գ. Տիլլօրիէ իր համոզումին հակառակ ոչ մէկ եզրակացութիւն հանել ուզեց:

... Եւ ահաւասիկ, Գ. Տիլլօրիէ դարձաւ հոգածու ամուսին մը: Ան հրաժարեցաւ ընկերական հաւաքոյթներէ, և շրջակայ գիւղերը այցելելու իր սովորութիւնէն. վիճակներ՝ զորս ստացած էր երկու տարիէ վեր, տունէն հեռու:

Ատիկա մէկ հաւիկ արկածախնդրութիւնն էր, զոր ունեցաւ ան, իր ամբողջ կեանքին մէջ... և անոր յիշատակովը ապրեցաւ:

Եւ այս բանը բաւեց իրեն, որ ան իր ապրելակերպը կարենայ կանոնաւորել: Ցանցաւոր եղած ըլլալու զգացումէն չէր տառապեր, միւս կողմէ ներոզամիտ ըլլալ կը թուէր նաև իր կնոջ հանդէպ:

Աւելին ըլլալով, անոնք հիմա իրերահասկացողութեան ու իրաւախոհութեան նոր եղանակ մը գտեր էին. իրենց ժամանակը կը գործածէին գնումներ ընելու, տանավաճառներն ու հնաձարձաւառները պտտելու: Այսպէսով կը խնայէին ու կը լեցնէին իրենց զարակները, անգամ մը ալ՝ ալբանալու համար զանոնք: Մէկ խօսքով հաւաքածոներ կազմելու նուիրուեր էին:

Այսպիսի զանազան հին առարկաներ, ժանգոտած հին դրամներ, աշտանակներ էն. պարունակող ցուցափեղկի մը մէջ էր որ, Տկն. Տիլլօրիէ նշմարեց հովանոցի սաթէ կոթ մը: Երբ զայն ցոյց տուաւ իր ամուսնոյն, այս վերջինը չկրցաւ ճիչ մը զսպել: Առաջին ակնարկով իսկ ճանչցեր էր զայն: Եւ առանց դիտնալու թէ ինչ նպատակով, փափկանկատութեա՞ն թէ քինախնդրութեան զգացումով, ան կը մերժէր անոր գնումը: Իսկ Տիկ. Տիլլօրիէ ալ գիտէ՞ր արդեօք թէ ինչո՞ւ համար չէր ուզեր հրաժարիլ անկէ:

Տկն. Տիլլօրիէ, զատ այս առարկայովը չափազանց խանդավառ զգուշաւանքով անդրադարձաւ թուականին և սկզբնատառերուն զոր կը կրէր ոսկեայ օղակը և համոզումով կրկնեց թէ անիկա վանոց մը էր այս կոթով՝ և որոյ հին պատմութիւն մը խորհրդանշէր ապահովաբար:

Իրերու խորհրդաւոր ազդեցութիւն...:

Տկն. Տիլլօրիէ, հեզանմրոյր կինը, յանկարծ փոխեց իր տրամադրութիւնը: Անձրեւոտ օրերուն չափազանց կասկածոտ, անհանգիստ և նախանձոտ կը դառնար ատ պատճառ... առա՞նց պատճառի: Իսկ Գ. Տիլլօրիէ անձկութեամբ դիտէր թերեւս այդ չարագուշակ հովանոցը՝ զոր Տկն. Տիլլօրիէ [illegible] շուշա չպիտի կորսնցնէր երբեք...

Թրգմ. Ն.

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԻՇԼԱՆԷԻ ԱՂԷՏԻՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ՎՏԱՆԳԱՒՈՐ ՓՈՐՁ ՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՒ

10-12 ՀՈԳԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ

Շիշլանէի աղէտալի արկածին դատական քննութիւնը վերջացաւ։ Նախորդ դիշեր, ընդհ. դատախազի օգնական Հիքմէթի ներկայութեան, աղէտին վայրը նոր քննութիւն մը ևս կատարուեցաւ, որուն անդնդակիրը յանձնուեցաւ ընդհ. դատախազութեան,

Կատարուած վերջին փորձը բաւական յուզումնալից եղած է։ Ընկերութեան ներկայացուցիչները պնդած են որ հանրակառք մը, միմիայն ձեռքի անուարդել զօրանալով, կրնայ Գրօքէր պանդոկին առջեւէն մինչեւ պանքաները իջնել և այս ուղղութեամբ փորձ մը կատարել պահանջած են։

Ասոր վրայ, փորձի համար սահմանուած կառքին շարժիչ լծակը վերցուած է և այս կերպով ելեկտրական հոսանքը կտրուած է կառքէն։

Այս փորձին իրենց մասնակցութիւնը բերելու համար նշանակուած էին հետեւեալ անձերը.

Քաղաքապետ. դիտական խորհրդական Մուսթաֆա Հաւլքի, մեքանիկական ճիւղի օրէն Նուսրէթ և երթեւեկի ճիւղի երկրապահ Նաքուլ։ Ասոնք յայտնելով թէ այս փորձը վտանգաւոր պիտի ըլլայ, հրաժարած են հանրակառք նստելէ։

Իսկ ընդհ. դատախազի օգնական Հիքմէթ, հակառակ յիշեալ պաշտօնատարներու պնդումին, չուզեց առնելով ամէն հաւանական վտանգ, նստած է փորձի կառքը։ Նստած է փորձի կառքը։ Շիշլանէէն մինչեւ Պանքաները հասած է, իր բոլոր արագութեամբ և միմիայն ձեռքի անուարդելը գործածելով։ Թէ ներկաները և թէ փորձին ականատեսները մեծ յուզում և ապշանք անցուցած են։

Փորձագէտներու մարմինը այս փորձին ներկայ գտնուելէ վերջ, դիտ. որ նոր հաւաքում մը ևս ունեցած է Քաղաքապետ. դիտական խորհրդի անօրէնին սենեակին մէջ և իր տեղեկագիրը վերջին անգամ մը ևս աչքէ անցընելով, սրբագրութիւններ կատարած ու յանձնած է ընդհ. դատախազութեան։

ՈՐՊ՞ՆՔ ԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Փորձագէտներու տեղեկագրին բովանդակութիւնը անշուշտ գաղտնի կը պահուի։ Բայց կարգ մը տեղեկութեանց համաձայն, կը կարծուի թէ 10-12 հոգի իբրեւ մասնցաւոր դատարան պիտի յանձնուին։ Ասոնց կարգին նաեւ կառուղիզը։

Կառուղիզ Ֆահրի, երբ Ալիքն պաքալի առջեւ իր անցուցած միջոցը արկածէն յետոյ վերահասուցած է անուարդելներու խանգարուած ընթացքը, հակառակ հանրութեան։ Ուրեմն, հակառակ հանրութեան թէ «բան մը չկայ», դուն ալ կառքը ինք դարձեալ պնդած է։ Բայց Նիազի եւս կառքը նստելով ի վերջոյ տեղի ունեցած է անոթ աղէտը։

Ընդհ. դատախազութիւնը նկատի առնելով այս բոլոր պարագաները ըստ այնմ պիտի պարտաւորի ամբաստանագիրը և Պայրամի անմիջապէս վերջ հարցաքննել դատաւորին պիտի յանձնէ դատաքննիչ դատաւորին պիտի յանձնէ դատաքննութիւնը։

ՀԱՄԲՈՐԴՆԵՐՈՒ ԽՈՆՈՒՄԸ ԵՒ ԱՐԿԱԾԸ

Քննիչ մարմինը, նոյնպէս ուսումնասիրել թէ համբորդներու թիւը կ'ազդէ՞ անուարդելներու գործածութեան վրայ։ Այս մասին ևս դաղափար մը կազմելու համար 30 համբորդներու ծանրութեան տարբերութիւնը ուսումնասիրուած է։ Փորձը ցոյց տուած է որ կառուղիզը կրնայ ուզած տեղը անմիջապէս կառքը կեցնել։

Յետոյ 40 համբորդի ծանրութեամբ ուսումնասիրուած է որ անուարդելները գործածելով հանդերձ, կառքը 4—5 մէթր կը քաշկռտուի և այնպէս կանգ կ'առնէ։ Աւելորդ է ըսել թէ զարհուրելի տեղերու մէջ կառքին արագութիւնը և թափը ինքնաբերաբար կ'աւելնան։

ԿԱՌՔԵՐԸ ՊԻՏԻ ՔՆՆՈՒԻՆ

Ընդհ. դատախազութիւնը թեղքերէ մը գրելով կուսակալութեան, պահանջած է որ բոլոր հանրակառքերը գիտական մարմնի մը կողմէ քննութենէ անցուին։

Կուսակալութիւնը այս թեղքերէն քաղաքապետութեան և հանրաշինութեանց քարտուղարութեան ղրկած է, որոնք Պայրամէն վերջ պաշտօնական մարմնի մը առջեւ բոլոր կառքերը պիտի քննեն և անոնց թերիները ճշդելով, խանգարուածները ապասարկութենէ պիտի դադրեցուին։

*** Վերջին արկածին հետեւանքով դարձեալ նկատի առնուած է հանրակառքերուն գուները օրթամթիք քնելու հարցը, այսինքն կառքը գացած միջոցին գուները լինքնին պիտի փակուին, իսկ կանգ առած ատենը պիտի բացուին։

Կ'ըսուի թէ ընկերութիւնը մտադիր է լաւ պարզեւ մը տալու այն երկրաչափին որ պիտի յաջողի այս օթոմատիք գրութիւնը կիրարկել գոյութիւն ունեցող կառքերուն վրայ։

ՎԵՐՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԻՆ ՀԱՄՕՐԻՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Եվգաֆի վարչութիւնը ճշդած է վերջին փոթորիկին հետեւանքով վնասուած մզկիթները, որոնք հետեւեալներն են.—

Սուլթանահմէտ, Միւլէյմանիէ, Եէնիճամի, Նուրբոսմանիյէ, Պէյազիտ, Ֆաթիհ, Ջօրլու Ալիփաշա, Շէհզատէճամի, Քեաթիպ Սինան Բիւսթէմփաշա։

Ասոնցմէ զատ, Էյուպի և ուրիշ կարգ մը մզկիթներ եւս բաւական վնասուած են։ Իսկոյն ասոնց նորոգութեան պիտի ձեռնարկուի։ 10 հազար ոսկիի ծախս մը գնահատուած է։

ՕԴԱՆԱՒԻՆ ՄԷՋ

ՏՐՈՒԱԾ ԽՈՍՏՈՒՄԸ ՕԴԸ ՑՆԴԵՐ Է

Սատէթ անուն երիտասարդուհի մը ընդհ. դատախազութեան դիմելով գանգատ յայտնած է Մաճիա անուն երիտասարդի մը մասին։

Սատէթի պնդումներուն համաձայն, Մաճիա զինքը համոզած է ամուսնանալու խոստումով և օգտնուելով Իտալիա տարած։ Սակայն երբ Իսթանպուլ վերադարձած են, երիտասարդը երես դարձուցած է անոր։

Այժմ այս մասին քննութիւն կը կատարուի։

*** Գործավարներու Խորհուրդին որոշումով, Վանի կուսակալութեան ենթակայ Կէվար քաղաքին անունը Եիւքսէքովա և Ջորումի Հիւսէյինապա նահիյէին անունն ալ Ալանա եղած են։

*** Իսթանպուլի երկրագործ. անօրէնութիւնը գանազան հեռաւոր երկիրներէ ընտիր և ազնուազգի պտղատու ծառեր բերել տալով, զանոնք բաժնած է պարտիզպաններու։ Բերուած ծառերուն մէջ կը գտնուին 68 տեսակ տանձ, որոնց 14 տեսակը Իսթանպուլի շրջանին մէջ պիտի հասնին։

*** Փախստեայ և առանց տոմոզ. քննութեան մորթուած կենդանիներու միսը կերած ըլլալնուն հետեւանքով, Զաթալճայի մէջ 6, Սկիւտարի մէջ 2, Սիլիվրիի մէջ 3 և Շիլէի մէջ 1 հոգի ածխազեր վարակուած բայց գտմանուած են։

*** Տիարպէքիրի քաղաքապետութիւնը արգիլած է քաղաքին մէջ պաքալ՝ շալվարով, տպայով, մինթանով և այս կարգի այլակերպ երեւոյթներով։ Այս արգելքը թէեւ հնչէն ի վեր գոյութիւն ունէր, բայց խստութեամբ չէր գործադրուեր։

*** Մուշի մէջ այս տարի ընտրէ ձիւնած։ Ցեղացիները զարմանքի մատնուած են այս երեւոյթը անբնական գտնելով։

*** Ելեքտրականութեան գինը պատկան մարմնին կողմէ 10 փարա զեղչուած է։ Այսպէս 14.50 դրշ. պիտի գտնուի քիլօվաթի համար, փոխանակ 14.75ի։

ՄԱՄԼՈՒՔ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Այս գիշեր, Մաքսիմի սրահներուն մէջ տեղի կ'ունենայ Մամուլի Ընկերակցութեան տարեկան պարահանդէսը։

Մամուլի պարահանդէսները միշտ գերազանցած են իրենց նըմանները, մասնաւորաբար իրենց հանդիսականներով, որոնց մէջ կը գտնուին պետական անձնաւորութիւններ, օտար դիւանագիտական մարմնոյ, ինչպէս նաեւ բարձր դասու ներկայացուցիչներ։

Արդէն ոչ մէկ ջանք խնայուած է, փայլուն և հաճելի դարձնելու համար պարահանդէսը։

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կրթ. գործավարութիւնը երեք հարցարան ղրկած է դպրոցներուն։ Առաջինով կը հարցնէ թէ՝ ե՞րբ հիմնուած է չենքը, համայնքի՞ն թէ անհատի սեփականութիւն է, ցերեկօթի՞կ թէ գիշերօթիկ է, երկսե՞ռ է, որո՞նցմէ կը բաղկանայ մատակարար մարմինը և ի՞նչ գործով կը զբաղին։

Այս հարցումներուն պէտք է պատասխանել շաբթուան մը ընթացքին, միասին տալով չենքին պատկերը և գպրոցին պատմականը։

Երկրորդ հարցումը կը վերաբերի աշակերտութեան։ Այսպէս, կը հարցուի աշակերտներու ընդհ. թիւը, դասարաններու մէջ գտնուած թիւը, վճարովիներու և ձրիներու թիւը, դպրոցի տարեկան պիւտճէն։

Երրորդ հարցումը կը վերաբերի ուսուցիչներուն։ Այսպէս կը հարցուի ուսուցչին ազգը, կրօնքը, տարիքը, ամուրի՞ թէ ամուսնացած ըլլալը, դասակներու թիւը և տարիքը, իրենց վկայականին տեսակը, բացի մայրենի լեզուէն ուրիշ ի՞նչլեզու գիտնալը, թոշակը, ի՞նչ հեղինակութիւն կամ թարգմանած գործ ունենալը։

ՖՐԱՆՍ. ԹԱՏՐՈՆ

ՀԱԼԻՔ ՕՓԷՐԷԹԻ

Յերեկոյթ ժամը 16ին

ՊԷՅՕՂԼՈՒ ՉԻՇԷՅԻ

գեղեցիկ օփէրէթը

Այս գիշեր ժամը 20.30ին

Հալիմէ

Արեւելեան մեծ օփէրէթը

Մասնակցութեամբ Զօզօ Ֆալմասի եւ Գօֆինեսթիսի

Մօտ օրէն՝

"Լա Պայատէռ,,

Ճարոն երեսփ. ժողովի նախագահը վարչապետ անուանուեցաւ

ԹՕՔԻՕ 3.— Պատերազմական գերագոյն խորհուրդի բոլոր անդամները իրենց հրաժարականը ներկայացուցին պատերազմ. նախարարին և յայտարարեցին թէ կը փափաքին բաժնել վերջին դէպքերու պատասխանատուութիւնը։ Պատերազմ. նախարարը վաղ այս պարագան պիտի հաղորդէ կայսեր։

ԼՈՆՏՈՆ 4.— Անգլ. կառավարութիւնը հաւանաբար գիտողութիւն պիտի ընէ Թոքիոյէ, անգլ. լրագրող Կէրալտ Սամսոնի ձերբակալման մասին։ Ինչպէս յայտնի է յիշեալը 20 օր բանտարկութեան դատապարտուած էր, վերջին դէպքերուն մասին սուտ լուրեր տարածելուն հետեւանքով։

ՃԱԲՈՆ ՆՈՐ ԴԱՀԼԻՃԸ

ԹՕՔԻՕ 4.— Երեսփ. ժողովի նախագահ և ազակողմի անդամ Իշխան Քոնոյէ վարչապետ անուանուեցաւ։

ԼՈՆՏՈՆ 4.— Թոքիոյէն կը հաղորդուի թէ հրամանագիր մը հրատարակուած է, որով բացառիկ վիճակ կը հռչակուի և պատերազմ. նախարարին նախագահութեամբ զինուորական առեան մը կը կազմուի, դատելու համար ըմբոստները։

Ֆօն Նէօյրաթ Հռոմի մէջ

ՄԻԼԱՆՕ, 4.—Գերման արտաքին նախարար Ֆօն Նէօյրաթ այս գիշեր Միլանո հասաւ եւ առաւօտուն իր ճամբան շարունակեց դէպի Հռոմ։

Հելլէն պատրզմ. նախարարը հրաժարեցաւ

ԱԹԷՆՔ, 4.— Պատերազմ. նախարար Զօր. Փափաքոսի յաջորդ կարգուեցաւ Զօր. Սթրիմպէր, արքայական տան զինուոր. պետը։

ԹՈՒՐՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՑՐՈՑԹ ՊԱՏՃԱՌԵՑ

ԼԱՎԱԼԻ ՄԷԿ ԽՕՍՔԸ

Մեր երէկի թիւով առած էինք Ֆրանսայի նախորդ վարչապետ Լաւալի «Ա՛ոն թուրք չեմ» խօսքին առթիւ «Սօն Փոսթա»ի մէջ երեւցած հրատարակութիւնները։ Սորեւ կուտանք «Ճումհուրիթ»ի մէջ նոյն առթիւ վերի խորագրերով գրուածը.—

«Վիւ» շաբաթաթերթը Ֆրանսայի նախորդ վարչապետ Լաւալի հետ ունեցած մէկ տեսակցութիւնը հրատարակած էր։ Լաւալ իր հաստատեցին տեղի ունեցած քննադատութիւններուն և յարձակումներուն անդրադառնալով, ըսած է.

— Ձիս կ'ուզեն «Թրքական գլուխ» մը նկատել։ Կը սխալին։ Ես Թուրք չեմ։ Օվէրնիացի եմ։

«Թէթ ոբ Թիւրք» անունով ուժի գործիք մը կայ որ առհասարակ տեղ կը գրաւէ Ֆրանսայի ասնավաճառներուն մէջ։ Բաւունցքի հարուածներ կուտան այս գործիքին և ասեղ մը ցոյց կուտայ բաւունցքին ուժը։ Ձենք գիտեր թէ ի՞նչ առթիւով «Թէթ ոբ Թիւրք» որակած են այդ գործիքը։ Ֆրանսական այս ասացուածքը կը համապատասխանէ մեր «վա՛ւր ապաւլբեան» ասացուածքին, որ ցոյց կուտայ քննադատութեանց և յարձակումներու նշանակ դարձածմէկը։

Լաւալի այն խօսքը Թրքութեան համար անուանարկիչ գտած է համալսարանի և բարձրագոյն վարժարաններու ուսանողութիւնը, որմէ խումբ մը եղէկ մեր խմբագրատունը գալով իրենց զայրոյթը յայտնեցին, ըսելով թէ Թրքութեան հասցէին անարդական այդ խօսքը կ'ընէ Լաւալի պէս մէկը, որ վարչապետ և արտաքին նախարար եղած է։

Ձենք յուսար որ Լաւալ ըսած ըլլայ այդ խօսքը Թրքութիւնը անարգելու մտքով, որովհետեւ խօսակցութեան շարժառիթը ո եւէ կապ չունի Թրքութեան հետ։ Միայն թէ, որպէս արտաքին նախարար, «Թէթ ոբ Թիւրք» ասացուածքը գործածելով «կաֆ» ըրած է։

Եթէ երբեք այս խօսքին մէջ ո՛եւէ անարդական նպատակ տեսնէինք, որպէս զի ազգասէր Թերթ, անմիջապէս կը միջամտէինք և Լաւալին բերնին չափը կուտայինք ինչպէս ըրած ենք միշտ։

Բայց և այնպէս, չենք կրնար չգնահատել այն բարձր զգայնութիւնը, զորս ցոյց կուտայ Թուրք երիտասարդութիւնը, ի սէս Թըրքութեան հետ կապ ունեցող արտայայտութիւններու։

*** Գէզէլայը, Պայրամի առթիւ, ածուխ և հագուստ առած է իրեն դիմող բոլոր կարօտներուն, անխտիր։ Նոյն հաստատութիւնը, հաճոյքով կ'իմանանք թէ, Ս. Զատկի առթիւ ալ օժանդակութիւններ պիտի կատարէ մասնաւորաբար քրիստոնեայ կարօտներուն։

ՍԱՐԱՅ սինէման կը ներկայացնէ
ՊԱՑՐԱՄԻՆ ՍՈԹԻՒ
ԿՐԱԿԷ ԹԱԳՈՒՀԻՆ
Թուրքերէն խօսուն, սարսափազդու եւ յուզական սիրային Ֆիլմը, ուր կը պայքարին բնութեան բոլոր ազէ՝ները։
Արտակարգ երաժշտութիւն։ Պարի գեղեցիկ տեսարաններ։
Մազեր փշաքաղող արկածախնդրութիւններ։
Անպատճառ տեսէք այս Ֆիլմը

ԹԻԻՐՔ սինէման կը ներկայացնէ
ՊԷՊՕՆ
որ այնքան մեծ ընդունելութիւն գտաւ ամէնուն կողմէ
Ցաւելուածաբար պիտի ներկայացուի նաեւ
ԳՆՉՈՒԻ ՊԱՌՈՆ

istanbul Belediyesi Şehir Tiyatrosu
ԻՍԹԱՆՊՈՒԼԻ Քաղաքապետ. թատրոն
ԹԱԲԱԹԱԿԱՆ ԽԱՂԱՑԱՆԿ

Մարտ	3	Երեքշաբթի	ժամը 20.30ին	ՖԱՌԻՍԹ
»	4	Չորեքշաբթի	» 14ին	մանկական թատրոն
»	4	»	» 20.30ին	ՖԱՌԻՍԹ
»	5	Հինգշաբթի	» »	»
»	6	Ուրբաթ	» »	»
»	7	Շաբաթ	» 14ին	Մանկական թատրոն
»	7	»	» 20.30ին	ԵԱՐԱՍԱ
»	8	Կիրակի առաւ.	» 11ին	ՖԱՌԻՍԹ
»	8	»	» 15ին	ԵԱՐԱՍԱ
«	8	»	» 20.30ին	»

ԲՈԼՈՐԷՆ ԳԵՐԱՁԱՆՑ, ԲՈԼՈՐԷՆ ԳԵՐԻՎԵՐ
ԷՐՎԻԼ ԿՕԼՍ
ERWIL GOLD
0,08 միլ. ասխարհահռչակ ա. ծելիի օճաղը է։
ԷՐՎԻԼ ԿՕԼՍ 1935ի Լայփցիկի Ցօճավաճառիճ մեծ մրցանակը ստացած է։
Գերման նուրբ արուեստին և կատարելագործեալ թէքնիքին մէկ գլուխգործոցն է։
Միակ փորձ մը պիտի զարմացնէ ձեզ։
ՓՆՏՌԵՑԷՔ
ԲՈԼՈՐ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԵՐԻՆ

ՍԻՆԷ ԱԶԱՔ
ԿԷՏԻԿ ՓԱՇԱ ԶԱՐԾԸ ԳԱՓՈՒ
Պայրամի առթիւ բացառաբար 4 Մարտ չորեքշաբթիէն սկսեալ նոր փրօկրամ
Վառիէթէ կամ Թիվոլի մէջ սիրը
զուտ Թուրքերէն խօսուն մեծ Ֆիլմ՝ որ մեծ համբաւ շ-հեցաւ ամէն կողմ
Անգլիական Լրտեսութիւնը
Հետաքրքրաշարժ, մեծ և յուզիչ ռամ, նշանաւոր արթիսթ ԼԷՍԼԻ ՀՈՎԱՐԴԻ և ՔԷՑ ՖՐԱՆՍԻՍԻ կողմէ
Սէր, հեշտանք, վրէժ, թշնամանք եւ յաջողութիւն

ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՔԷՉԷՃԵԱՆ
ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿԵՐՊԱՍԵՂԻՆՈՑ
Անգլիական եւ ուրիշ ամէն տեսակ առաջնակարգ կերպասներ
ՂԱԼԱԹԻԱ, ՀԱՐԱՃՃԻ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 36
Մեր վաճառատունէն առեւտուր ընողները քացարձակապէս կրնան վստահ ըլլալ թէ երբեք չպիտի խաբուին, որովհետեւ մեր անշեղ եւ անյեղլի սկզբունքն է՝
ՊԱՏՈՒԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԻՉՈՎ ԳՈՀԱՆԱԼ

Türkie Cumhuriyet Merkez Bankasi

29 ՓԵՏՐՈՒԱՐ 1935

(ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ)

ԳՈՑՔ

ՄՆՏՈՒԿ	Քիլո	Թրք. Ոսկի	Թրք. Ոսկի
Ոսկի ձոյլ վիճակի մէջ	16.626.037	23.385.901.25	
Թղթադրամ		14.890.768.—	
մանրուք		1.806.491.25	39.363.160.50
Տեղական բդրակիցներ			
Թրք. ոսկի		314.506.79	314 506.79
Արտասահմանի բդրակիցներ			
Ձոյլ ոսկի քիլո	4.690 632	6.597.763.33	
Ոսկիի վերածելի ազատ տրվիզներ		553.847.22	
Ուրիշ տրվիզներ և պարտական քլիրինկի մնացորդներ		15 849.472.88	23.001.083.43
Դանձատոմս			
Շրջաբերութեան մէջ եղող թղթադրամի ստանձնուած փոխարժէք		158.748.563.—	
Օրէնքին 6 և 8րդ յօդուածներուն համաձայն պետ. գանձին կողմէ վճարուած		11.327.785.—	147.420.778.—
ԴՐԱՄԱԳԱՆԱԿ			
Դանձատոմսեր		1.727.000.—	
Մուրհակներ (առեւտր.)		12.545.214.74	14.272.214.74
ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐ			
Ա.— Շրջաբերութեան մէջ գտնուած բդրադամի իբր երաշխաւորութիւն ունուցեալ (ոսկեղեն արժէքով)		34.312.727.56	
Բ.— Արժեթուղթ և պարտաթուղթ		4.436.978.18	38.749.705.74
Դրամ ոսկիի եւ «տրվիզ»ի վրայ ավանս		28.767.43	
Դանձուվճարու ի հաշիւ ավանս		4.200.000.—	4.228.767.43
Բաժնետէրեր			4.500.000.—
գանձագանձ			3.151.381.14
		Գումար	275.001.597.77

2 Մարտ 1933 թուականէն ոկսեալ
Զեղչի համեմատութիւնը 100ին 5.50

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

		Թրք. Ոսկի
Պահեստի դրամ		15.000.000.—
Շրջաբերութեան մէջ գտնուած բդրադրամ		1.026.756.67
Ծանձնառութեան առնուած թղթդր.	158.748.563.—	
Օրէնքին 6 և 8րդ յօդուածներուն համա. ձայն պետ. գանձին կողմէ վճարուած	11.327.785.—	
Ծանձնառութեան առնուած թղթադրամներուն այսօրուան մնացորդը	147.420.778.—	
Ամբողջովին ոսկիով ապահովուած յաւելուածաբար շրջաբերութեան ելած թղթադրամ	18.000.000.—	
Ըէսքոնթի տեղ յաւելուածաբար շրջաբերութեան ելած	1.000.000.—	166.420.778.—
Ուսանդներ Թուրք դրամով		16.757.554.—
Տրվիզի յանձնառութիւն		
Ոսկիի վերածելի տրվիզներ	2.070.610.91	
Ուրիշ տրվիզներ և պահանջող քլիրինկի մնացորդներ	18.251.238.15	20.321.849.06
Զանազան		55.474.660.04
	Գումար	275.001.597.77

Ոսկիի փոխարէն կանխավճար 100ին 4 50

ՖՐԱԹԵԼԼԻ ՍՊԷՐՔՕ
FRATELLI SPERCO

Կալաթա, Զինիլի Ըէֆիքմ խան Ա. յարկ թիւ 93, 95—97։ Թէլէֆոն 44792։

Հայանեական Շոգենաւային Ընկ.

ԱՄՍԹԷՐԴԱՄ

Արտաքին ապահովագրութիւն

Մօտաւոր մեկնում դէպի Անվէրս, Ռոթէրտամ, Ամսթէրտամ, Համբուրգ։

Orestes	Մարտ 5ին
Hermes	Մարտ 15ին

Գիտցուածներու վրայ մանրամասն հանգամանքներ։ Հանդէպ և Մայնի բոլոր նաւահանգիստներ։

Ներածման ապահովագրութիւն Ամսթէրտամէն կ'ուղղուի

hermes	Մարտ 10ին
Hercules	» 24ին

Ամսթէրտամէն մօտաւոր մեկնում

Ganymedes	Մարտ 11ին

Nippon YusenKaisha Tokyo

ՇՕԳԵՆԱՒԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ուղղակի ապահովագրութիւն

Ուղղակի ուղեւորութիւն Եոքոհամայի, Քոպէ, Տէյրէնի, Ջինգիմասի, Շանկհայի, Հանկ-Քոնկի, Թինգտաուի, Գոլոմպոյի, Մանիլի, Բոմբէյ Սուլթան, Պանգուտ, Սամուռն, Վանա, Գուրկազ։

Ի ԶԷՕ

Շբ. 29 Փետր. ժամը 17ին Սելանիկ, Միտիլլի, Իզմիր, Փաթրաս, Գրինտիզի, Վենետիկ, Թրիէսթէ։

ՄԻՐԱ

Բշ. 2 Մարտ. ժամը դէպ ի Փիրէա, Փաթրաս, Նաւարին, Մարսիլիա, Ճենովա։

ՖԷՆԻՍԻԱ

Դշ. 4 Մարտ. ճիշդ ժամը Գուրկազ, Վանա, Գոնոթանցա, Սուլինա, Կոնցա, Իզմիր։

ԱՍԻՐԻԱ

Դշ., 4 Մարտ. ժամը 17ին Գալաթա, Սելանիկ, Կոլոս, Փաթրաս, Գրինտիզի, Թրիէսթէ։

ՃԷԼԵՕ

Եշ., 5 Մարտ. ժամը 20ին Գալաթայ քարափէն դէպ ի Գրինտիզի, Վենետիկ, Արիէսթէ։

Աւելի մանրամասն թիւններու համար դիմել Թրիէսթինոյի ընդհ. գործակալ Թեան, Մէրքէզ Ըէֆիքմ խան Գալաթա, թէլէֆոն 44877—8։ Կամ Բեբայի ճիւղը Գալաթայ թէլ 42490

Գործակալութիւնս կան շաբաթուայն ընդերքութիւն մը։ Կարգ պահելով հանրական ընդերքութեանց մասն է։

Արեւի բոլոր նաւահանգիստներ ազատ ուղղակի փոխարէն ուղղակի ուղեւորութիւն։

ԼՈՅԴ ԹՐԻԷՍԹԻՆՕ
LLOYD TRIESTINO

ՄԵԿՆՈՒՄ

ՊՈԼՍԷՆԱ

Շբ. 15 Փետր. ժամը 17ին դէպ Սելանիկ, Միտիլլի, Իզմիր, Փաթրաս, Գրինտիզի, Վենետիկ, Թրիէսթէ

ՄՈՐԷԱ

Կիր. 17 Փետր. ժամը 17ին դէպ ի Փիրէ, Փաթրաս, Նաւարին, Մարսիլիա, Ճենովա

ԱՍԻՐԻԱ

Դշ. 19 Փետր. ժամը 17ին Գուրկազ, Վանա, Գոնոթանցա, Սուլինա, Գոնոթանցա, Գուրկազ։

ՃԷԼԻՕ

Դշ., 20 Փետր., ժամը Գալաթայ քարափէն կը դէպ ի Փիրէա, Գրինտիզի, Ակ, Թրիէսթէ։

ՍՓԱՐԹԻՎԱՆԹՕ

Դշ., 26 Փետր., ժամը կը մեկնի դէպի Գուրկազ, Գոնոթանցա, Կալաց, Սուլինա, Տրապիզոն, Վանա, Գուրկազ։

ՔԷՐԷՆԱԼ

Եշ. 27 Փետր. ժամը 20ին Փիրէ, Գրինտիզի, Վենետիկ, Արիէսթէ։

ԱԼՊԱՆՕ

Եշ. 27 Փետր. ժամը 17ին Գուրկազ, Վանա, Գոնոթանցա, Նովորոսսիք, Պաթում, Տրապիզոն, Սամսուն, Վանա, Գուրկազ։

Ի ԶԷՕ

Շբ. 29 Փետր. ժամը 17ին Սելանիկ, Միտիլլի, Իզմիր, Փաթրաս, Գրինտիզի, Վենետիկ, Թրիէսթէ։

ՄԻՐԱ

Բշ. 2 Մարտ. ժամը դէպ ի Փիրէա, Փաթրաս, Նաւարին, Մարսիլիա, Ճենովա։

ՖԷՆԻՍԻԱ

Դշ. 4 Մարտ. ճիշդ ժամը Գուրկազ, Վանա, Գոնոթանցա, Սուլինա, Կոնցա, Իզմիր։

ԱՍԻՐԻԱ

Դշ., 4 Մարտ. ժամը 17ին Գալաթա, Սելանիկ, Կոլոս, Փաթրաս, Գրինտիզի, Թրիէսթէ։

ՃԷԼԵՕ

Եշ., 5 Մարտ. ժամը 20ին Գալաթայ քարափէն դէպ ի Գրինտիզի, Վենետիկ, Արիէսթէ։

Աւելի մանրամասն թիւններու համար դիմել Թրիէսթինոյի ընդհ. գործակալ Թեան, Մէրքէզ Ըէֆիքմ խան Գալաթա, թէլէֆոն 44877—8։ Կամ Բեբայի ճիւղը Գալաթայ թէլ 42490

Գործակալութիւնս կան շաբաթուայն ընդերքութիւն մը։ Կարգ պահելով հանրական ընդերքութեանց մասն է։

Արեւի բոլոր նաւահանգիստներ ազատ ուղղակի փոխարէն ուղղակի ուղեւորութիւն։

Sahibi ve yazı işleri müdürü
HOREN CAMCIYAN

Basıldığı yer
AHTUN Matbaası
Galata, TunelBillur sokak 10

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ ՎԷՊԸ ԵՂՈՂ

ԱՆԺ ԲԻԹՈՒԻՆ

18ՐԴ ՊՐԱԿԸ — 18 — ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ

Փնտռեցէք բոլոր ցրուիչներէն։ Կեդրոնատեղի՝ Ղալաթիա, Թիւնէլի քով, Պիլլուր փողոց, թիւ 10 ԱՐԹՈՒՆ տպարան։

5 ՊՐԱԿՆՈՑ ՀԱՏՈՐԸ ԶՐԻ Է

ԻԶԱՊՕ ԹԱԳՈՒՀԻ պրակները փնտռել «Անժ Բիթուի» պրակին մէջ

ՊՐԱԿԻ ԳԻՆՆ Է 5 ՂՐՈՒՇ

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՑՐՈՒԻՉՆԵՐԷՆ ԱՆԺ ԲԻԹՈՒԻ ՊՐԱԿՆԵՐԸ

Անոնք որ ցրուիչներու միջոցաւ դժուարութիւն կը կրեն սոյն խիստ հետաքրքրական վէպին պրակները ձեռք ձգելու համար, կրնան վերոյիշեալ հասցէին երկտողով մը իրենց հասցէն տալ, ու բօսթի միջոցաւ կանոնաւոր կերպով ստանալ, ինչպէս կ'ընեն շատեր։

ՍԱԿԱՐԱՆ

8 Մարտ 1936 Սրաբաթ

ՊԱՆՔԱԹՈՒՂԹԵՐ

ԵՒ ԲԱ ՆԵԹՐՈՒՂԹԵՐ

Բրէսի Ֆոնսիէ Եգիպ. 1886	100,—
» » » 1903	88.—
» » » 1911	84,—
Ներքին փոխառութիւն	95,—
933ի » Էրկանի	97,75
Սվոզ—Էրզրում	95.—
Անատոլու պարատաթ. Ա.Բ.	44.—
Գ.	45.—
Գոն Անատոլու	47,70
Անատոլու բաժ.	23.25
Իւնի Թիւրք Ա.	24,—
» » Բ.	22,50
» » Գ.	22.50
Թրամվէյ բաժ.	23,—
Ռէժի	2,10,—
Ներքինը Խայրիյէ	4.25
Իշ Գոնքասը	9,50
Մերքէզ Գոնքասը	60.50
Գոմոնթի	8.—

ՁԷՌԵՐ

Լոնտոն	619.—
Բարիզ	12,06
Հռոմ	10,03,20
Գրիւքսէլ	4,73,—
Զուիցերիա	2,43,—
Հոլանտական (ֆլորին)	1,17.80
Գերլին	1,97,91
Աթէնք	84,20,—
Աւստրիական	4,18,80
Տոլար	0,80,40
Լէվա	63,46.6
Մոսքուա	10,88,52

ԹՂԱԴՐԱՄՆԵՐ

Սթերլին	620,—
Լիրէթ	155,—
Ֆրանք ֆրանսական	167,—
Զուիցերիական ֆրք.	815,—
Գերմանական ֆրք.	82,—
Տրախմի	24.
Լէյ	15.—
Լէվա	24,—
Տոլար	124,
Ռայխսմարք	34,—
Գանք Օթման	283,—
Թրք. ոսկի	956.—

Ի՞նչ կ'ընէ որ իր ակռաները այսքան ճերմակ ու փայլուն դարձած են

ՌԱՏԻՕԼԻՆ

Ֆորմիւլը գտնուելէն ի վեր, ասիկա գաղանիք մը ըլլալէ դադրած է այլեւս։

ՌԱՏԻՕԼԻՆԸ կ'անհետացնէ կեբակուրներու, ծխախոտի և ոգելից ըմպելիներուն առաջ բերած բիծերը ու շատ կարճ ատենի մէջ կը ճերմկցնէ և կը փայլեցնէ զանոնք։

ՌԱՏԻՕԼԻՆԸ կը թափանցէ մինչեւ խոզանակ չմտած տեղերը, ու հարիւրին հարիւր կը սպաննէ մանրէները։

ՌԱՏԻՕԼԻՆԸ արդեւք կ'ըլայ լինաերու հիւանդութեանց, կը սընուցանէ և կը զօրացնէ զանոնք։

ՌԱՏԻՕԼԻՆԸ բոլոր ասոնցմէ զատ, չափազանց խատցած ըլլալուն, խնայողական ըլլալու արժանիքը ունի։

Թուրքիոյ ժողովուրդին՝ հարիւրին 99ին՝ պէս, դուքալ ներ՝ակառները խոզանակեցէք

ՌԱՏԻՕԼԻՆ

ակռայի խիւսով

«ԱՐԵՒԵԼՔԻ ԹԵՐԹՕՆԸ — ԹԻՒ 54 —

ՌՕԼԱՆ Տ'ԱԼՊԷՌ

ՀՐԵՂԷՆ ԻՇԽԱՆԸ

Բ. ՄԱՍ

ԱՊԵՐԱԽՏ ՊԱՇՏՕՆԸ

Գամ թէ չէր ուզեր բամբասանքներու տեղի տալ, որպէս զի իր ամուսնին վերադարձով չի զգար ինքզինքը անգունդի մը եզրը։ Եւ սակայն, ինչ որ ալ ըլլայ, սա սայթ է թէ չէր գիտեր ճշմարտութիւնը։ Ան չափազանց ըզգայուն դարձած էր այնքան՝ որքա՛ն կեանքին մէջ երբեք չէր եղած։ Մէկ բանով՝ ան փոխանակ խորխորատի մը առջեւ գտնելու ինքզինքը՝, կը գտնուէր հրաշագործ վերելք մը սեղծող իր կեանքի մէկ պահուն մէջ՝ զոր երբեք չէր կրցած երեւակայել իր աղջիկնութեանը՝ երբ իբր կարուհի կ'աշխատէր Գարգասօն մօրքուրերուն մօտ։

Այն առենները որքա՛ն միամիտ էր՝ գտնելով այդ համեստ զինուորականին մօտ իր բոլոր երազներուն և փառասիրութիւններուն պակասը։ Զէ՞ որ այդ երիտասարդին ապագան այնքան անորոշ էր, բայց ինչքա՛ն բուռն երիտասարդութեամբ մը կապուած էր իր մաքուր հոգին անոր։

Բայց ահա՛, այսօր որ հազիւ մեկնած էր ամուսինը իր մօտէն, յանկարծ բաղդատութեան կը դնէր Մեծ Զինուորը իր ամուսնին հետ։

Զէ՞ որ Անոռէ ուելի գեղեցիկ նկարագիր և ֆիզ՛քական շատ մը առաւելութիւններ ցոյց կուտար իր վրայ քան «Միւսոը»։

Բայց ... «Հրեղէն Իշխանը» բացառիկ տաղանդի տէր, անհամեմատ բարձր մտքի և երեւակայութեան մը տիրացած՝ չէ՞ որ իր հմայքը կը պատցնէր աշխարհի բոլոր կիներուն հոգիին վրայ։ Զէ՞ որ իրեն կը հպատակեցնէր բոլոր մեծ գիտունները, բանաստեղծները, երաժիշտները, զինուորականները, դիւանագէտները։ Զէ՞ որ իր բուռն ու անդուսպ տրիւնին մէջ կար աշխարհակալելու տատուածային շնորհը, որով երեկ Իտալիան, այսօր Եգիպտոսը, վաղը Հնդկաստանը պիտի դողային իր քայլերուն առջեւ։

Այն առեն՝ ... պիտի թագաւորէր «Հրեղէն Իշխանը» ամբողջ աշխարհի, պիտի գային իր առջեւ ծունր դնել թագաւորներ և կղերականներ։ Անոր ճամբաները գափներով և վարդերով պիտի ողողուէին։

... Եթէ երբեք ինք յաջողէր թագուհի դառնալ անոր մօտ, աշխարհի օրէնքները ինք իր մակարանով գործադրութեան պիտի դնէր։

Աշխարհի ամենահարուստ կիները իր մօտ պիտի գային խընդրանքներ ներկայացնելու։ Ի՞նչ... ո՜հ, իր գլխուն վրայ համակ ոգեմանդ թագով, զոր զետեղած պիտի ըլլար «Հրեղէն Իշխանը» իր ձեռքերով, ոսկեձոյլ գահին վրայ բազմած հրամաններ պիտի արձակէր։

. . . . . .

Ի՞նչ երազ, ի՞նչ անիմանալի երջանկութեան պակեր խեղճ Գարգասօններու դերձակուհիին համար։ Մարկոթի յղանալով այս բոլոր երանութիւնները, ապրիլ կը կարծէր անոնց մէջ։

Ահա՛ այն շատ զարմանալի սընափառութեան և շլացումի ճամբան, զոր բռնած էր խեղճ կինը՝ առանց երբեք կարենալ մտածելու թէ անոր աղբիւրը մառնիչ մը, Լէքիւքա՞ն էր։

Իրիկուն մը երբ Մարկոթի առանձին էր իր ընկերներուն ապարանքին մէջ, Լէքիւքան ներկայացաւ իր հետ ունենալով եգիպտական անզուգական ապարանքներ մը համակ արծաթ, շատ նուրբ բանուած, որուն կեդրոնը հազուագիւտ ադամանդ մը որ երբ արեւուն ցոյց արուէր, ծիրանի գոյներ բոլոր գոյները իր վրայ կը ցոլացնէր։

— Գաշտօնը ունիմ, ըսաւ — կեանքիս մէջ մէկ անգամ միայն ճշմարիտը խօսած ըլլալու համար կարծէք — այս նուէրը ձեզի յանձնել մեծ յաղթականին՝ Պոնափարթի կողմէ։

— Բայց հրաշալի՞ է գրախութենէն վեր ցատկելիք կըսուի... Եթէ երբեք չէի հանդիպիր մէջ այսքան պարզ մանգի մը ... ի՞նչ է ...

— «Արքայութեան կոչուի սարկ։ Ժողովրդական անգութիւն մը կը պատանիկ երկինքէն կ'ինչպէս հազուագիւտ է, իսկ ով զայն իր վրայ՝ բոլոր ները և երազները կը կատարեն։

— Ի՞նչպէս, Զորատարժանի դառ այս քարանիկ։

Լէքիւքա պատասխանեց։

— Այո՛, անիկա նոր բով ուզեց վարձատրել ազգային քաջագործութիւնները։